ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N2768 - Ա **16 ապրիլի 2009թ.**

ՏԻՉԻՆԱՅԻ ՓՈՂՈՑԻ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂՈՒ Հ. 17 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԿԻՐԱԿՈՍԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ, ԽԱՉԻԿ ԿԻՐԱԿՈՍԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ, ՍԱՐԳԻՍ ԽԱՉԻԿԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ, ԳՈՌ ԽԱՉԻԿԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Համբարձում Կիրակոսի Բաղդասարյանի (ծնված 18.03.1953թ.), Խաչիկ Կիրակոսի Բաղդասարյանի (ծնված 05.02.1959թ.), Սարգիս Խաչիկի Բաղդասարյանի (ծնված 05.05.1986թ.), Գոռ Խաչիկի Բաղդասարյանի (ծնված 18.08.1988թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Տիչինայի փողոցի 1-ին փակուղու հ.17 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 544.79քմ, որից 400քմ մակերեսով հողամասը Համբարձում Կիրակոսի Բաղդասարյանին, Խաչիկ Կիրակոսի Բաղդասարյանին, Սարգիս Խաչիկի Բաղդասարյանին, Գոռ Խաչիկի Բաղդասարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է: Օրինական հողամասին կից օգտագործվող 144.79քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1997 թվականը, Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի առաջին ատյանի դատարանի 26.01.2005թ. հ.2-72 քաղաքացիական գործով կայացված վճիռը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանման 20.10.2008թ. հ.78, Երևանի քաղաքապետարանի <<Հողի ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 06.03.2009թ. հ.20/2-Ե/86 գրությունները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 20.02.2009թ. հ.20-Ել-1198 եզրակացությունը, համաձայն որի Տիչինայի փողոցի 1-ին փակուղու հ.17 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Տիչինայի փողոցի 1-ին փակուղու հ.17 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Համբարձում Կիրակոսի Բաղդասարյանի, Խաչիկ Կիրակոսի Բաղդասարյանի, Սարգիս Խաչիկի Բաղդասարյանի, Գոռ Խաչիկի Բաղդասարյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 400քմ մակերեսով հողամասին կից 144.79քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 144.79քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանման կողմից:

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով:

4. Տիչինայի փողոցի 1-ին փակուղու հ.17 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ <<Տիչինայի փողոցի 1-ին փակուղու հ.17 տուն>>:

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Համբարձում Կիրակոսի Բաղդասարյանի, Խաչիկ Կիրակոսի Բաղդասարյանի, Սարգիս Խաչիկի Բաղդասարյանի, Գոռ Խաչիկի Բաղդասարյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները:

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Մալաթիա-Սեբաստիա թաղապետարան:

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ